ԱՆՏՈՆ ԱՄԻՐԱՅ ՁՕՓԵՆՑ, (Ակնայ Ապուչեխ գիւղէն). — Նաբոլէոնի Պաղեստին արշաւելու ատեն, 1800ին, Ձօփենց Անտոն ամիրան, իբր սեղանաւոր, մեծ վէզիր Քէօր Եուսուֆ փաշայի հետ կուգայ Յոպպէի մօտերը։ Անտոն ամիրայ Ս. Յակոբայ վանքին հատուցմանց խնդրոյն համար կը միջամտէ թէ՛ մեծ վէզիրին և թէ՛ կուսակալի որդւոյն՝ Ապու Մարսիի մօտ, որպէս զի գթութեամբ վարուին Ս. Յակոբայ վանքին հետ. և կուգայ Ս. Յակոբ, պատրիարքին և միաբանութեան հետ տեսակցելու համար։ Այս հատուցմանց խնդրոյն դիւրացման կը ստորագրեն նաև Մատենցի Ստեփան և Փիլիպպոս ամիրաներ։ (ԺՊԵ. Բ. 132-38), նաև (ՄՁ. թ. 25)։

ԱՆՏՈՆ (ՍՈՒՐԲ) ՄԻԱՅՆԱԿԵԱՑ ԹԵՒԱՅԻՏՑԻ. — Կ'ապրէր (251-356). վարքը գրած է Աղեքսանդրիոյ Ս. Աթանաս հայրապետը (299-373). այս վարքագրութեան թարգմանութեան տըպագրութիւնը (1855, ի Վենետիկ), կը պարունակէ հեաւեալ ծանօթութիւնը ՊԾԲ=1403 թուականաւ. «Թարգմանեցաւ գիրս այս ի սուրբ քաղաքն յԵրուսաղէմ յամի Ն երորդի Ծ երորդի գալստեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յամին յորում հանգեաւ քաջընթաց երանելին Մաշտոց». ձեռագրին մանրամասնութիւնք տեսնել (Երեւակ, 1858, Բ. վեցամսեայ, 43)։ Յիշատակարանիս թուական պիտի ըլլայ ՆԽ եւ ո՛չ ՆԾ ըստ ծանօթութեան, (Արարատ, էՁ, Ի)։

ԱՆՏՈՆ ՎՐԴ. ԱՆԱՊԱՏՑԻ. — Ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբ, 1840ին։

ԱՆՏՈՆ ՎՐԴ. ԵԻԴՈԿԻԱՑԻ, Մբ. — Զռ. 1801. Ս. Յարութեան Տաճարին հրկիզման առթիւ (1808) յօրինած է ողբ մը, ուր նկարագրած է հրդեհին պարագաները։ Անտոն վրդ. նորոգած է Պարոնտէր Գրիգոր պտ.ի շիրիմը. որու եղերքի յիշատակարանն է. «վերստին նորոգեցաւ շիրիմս Եւդոկիացի Ռէիզ Անտոն Վարդապետի ձեռամբ. թուին Հայոց ՌՄԿԴ» (=1815)։ Անտոն վրդ. նոյն տարին շինած է նաև Ս. Փրկիչ վանքին երկրորդ բանտի մատրան ոսկեզօծ սալաքարերը և գրած է արձանագրութիւն մը՝ նոյն մատրան սեղանին ձախակողմի խորհրդանոցի փայտեայ փեղկին դրսի մասին վրայ. ներքին կողմը կը կրէ Փրկչին խաչելութեան պատկերը, որուն վարի մասը նկարուած